Գլխավոր տեղեկություն

Համար	N 68
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Հիմնական ակտ (01.04.1996-11.05.1996)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	29.02.1996
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	29.02.1996
Վավերացնող մարմին	ՀՀ Նախագահ
Վավերացման ամսաթից	29.02.1996
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	01.04.1996

«Վավերացնում եմ»
Հայաստանի
Հանրապետության
Նախագահ Լ. Տեր-
Պետրոսյան
29 փետրվարի 1996 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 փետրվարի 1996 թվականի N 68
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1994 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի N 521 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների հաշվեկշիռներից նախկին ԽՍՀՄ հանրապետությունների տնտեսավարող սուբյեկտների միջև միասնական դրամական համակարգի ժամանակ առաջացած ժամկետանց, անհուսալի դեբիտորական ու կրեդիտորական պարտքերը հանելու անհրաժեշտությունից և Հայաստանի Հանրապետության կառավարության 1993 թվականի հունիսի 3-ի N 292 որոշմամբ հաստատված հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին կանոնադրությանը համապատասխան՝ հայցային վաղեմության ժամկետները լրացած կրեդիտորական պարտքերի բյուջե գանձման և դեբիտորական պարտքերի դուրսգրման ժամանակավոր կասեցումը դադարեցնելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել 1994 թվականի նոյեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության և նախկին ԽՍՀՄ հանրապետությունների տնտեսավարող սուբյեկտների միջև միասնական դրամական համակարգի ժամանակ առաջացած փոխադարձ պարտքերի մասին» N 521

որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 1996 թվականի ապրիլի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ **Հ. ԲԱԳՐԱՏՅԱՆ**

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան
11.05.1996, N 149	11.05.1996, N 68

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան